

Թերթ կը դրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱԺՆԵԳԻՆ

Պուկարիա
արեկ. 10 ֆր
վեցամս. 5 "
—
Արտասահման
ջարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "
—
Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
—
ԿԱՆԻՍԻԿ
—



ՊԵՅՄԱՆԷ

Գրութիւնքեա
չեն տրուիր
—
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE
—

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏՍԿՍՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Ե. ՏԱՐԻ

ՀՈԿՏ. 6 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 226

ՔԱՂՈՒԱԾ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅԱԹԵՐԹԵՐԷ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Արմէնիա. — Յուսահատելու չէ:
Հ'աւմէնի. — Գործը դիւանագիտութիւնը
կարգադրելու է:
Ժամանակ. — Միանալու է:
Նոր կեանք. — Ինտոր ուզեն նէ անանկ ը-
նելու է:
Դրօշակ. — Ապակեգործնացմամբ՝ ալան քէն-
տինէ գործելու է:
Անահիտ. — Ո՛չ, տուրիւն մը նաւատորմը-
ղով ցոյց մը ընելու է:
Ժողովուրդին համար. — Համբերելու է:
Շարժում. — Չէ՛, կուտելու է:
Իրաւունք. — Չլլար, միահամուռ կառավա-
րութեանց գիմելու է:
Կոչնակ. — Տիրոջը աղօթելու է:
Հայրենիք. — Բանակ մը պատրաստելու է:
Չայն Հայրենեաց. — Համաժողով մը գու-
մարելու է:
Փիւնիկ. — Գործը ամուր բռնելու է:
Արշալոյս. — Կամկար կամկար սպասելու չէ:
Բրօ Արմէնիա. — Հարստահարութեանց տե-
ղեկագիրներով Եւրոպայի պէյնաւանդ գլխուն տանկ
տունկ զարնելու է:
Բոժոժիկ. — Ասանկ հիանալի համերաշ-
խութեան է՞ մէջ ժողովուրդն ալ բռնաւորան կոր-
սնցուցած ըլլալու է:

ԱԶԳԱՅԻՔ

Էջմիածնայ միաբաններէն Գեր. Սիւքիաս
Եր. Պարզեանց չորս հազար ռուբլի նուիրեր է
վանքին կից նոր, ապարանին շինութեան իբր բո-
լոր ծախքը:

— Գէորգեան ձեմարանի շրջանաւարտնե-
րէն Պօլոս և Կոստանդին արկաւաղները Ս. Հայ-
րապետին հրամանով Մոսկուայի համալսարանը
պիտի մտնեն, առաջինը հետեւելու համար լեզ-
ուագիտութեան, իսկ երկրորդը գեղարուեստա-
կան ճիւղին:

— Ալգ. Հիւանդանոցի 1902 տարւոյ պարզ
Օրացոյցը հրապարակ ելած է: Անցեալ տարի
50.000 օրինակ սպառեր է:

— Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ կալ-
ուածներէն Սքլանցիի պայմանագրութիւնը ա-
ւարտած ըլլալով, յառաջվայ տարուան համար
ալ յանձնուած է Թոգաթլեանի 1700 ոսկի վար-
ձով. թէև Բերա Բալասի վարձակալը 500 ոսկի
աւելի առաջարկած էր, այսինքն 2200 ոսկի,
բայց Կալուածոց Հոգաբարձութիւնը քաջ գիտ-
նալով որ այդ 500 ոսկին աննշան ժամանակի մը
համար կը տրուեր կալուածին իրական արժէքը
ապագային կտորելու և իրեն հայ մրցակիցը հը-
րապարակէն փախցնելու գիտաւորութեամբ, հե-
տեաբար մերժած է Բերա Բալասի առաջարկը:

—Սխի մէջ հիմնուելիք արհեստանոց սրբանոցին համար տնօրէն կարգուած է Եէտի Գուէի Ս. Յակոբայ արհեստանոցի կահադրծութեան ճիւղին նախկին սաներէն Պ. Յակոբ Կիւլիճեան:

—Այս տարի Պոլսոյ բժշկական վարժարանի դեղագործ ուսանողներէն տասը հայ երիտասարդներ իրենց քննութիւնները յաջողապէս անցընելով շրջանաւարտ ելած են:

—Վանայ Յանկոյսներու ազգ. վարժարանէն ալ այս տարի երեք շրջանաւարտներ ելած են:

(Այսչափ ժամանակէ ի վեր Պուլկարահայ վարժարաններէն քանի՞ շրջանաւարտներ ելած են):

Բոժ. —Ամենքն ալ...

—Ս. Պատրիարքը շնորհակալութեան և օրհնութեան քիր մը ղրկել է Տօքթ. Յարութիւն խան Թիրեաքեանի՝ անոր ղրկած ի նպաստ ուրբերուն 100 փրանքին համար:

—Իզմիրի առաջնակարգ վաճառականներէն Տիար Ստեփան Սպարթալեան յառաջիկայ ձմեռան առթիւ տեղւոյն ամէն ազգէ աղքատներուն բաշխել է ամէրիգան, պասմա, ածուխ և դրամ:

—Սանասարեանցի կտակակատար Պ. Կարապետ Եղեանց, վերջին անգամ ալ ներկայ գտնուելէ ետքը Սանասարեան խնամակալութեան նստին, որուն մէջ վարժարանին Պոլսոյ մէջ ունեցած Միւլք կալուածը Վազֆի վերածելու վերջնական կարգադրութիւնը տեղի ունեցած է, հրաժեշտ առնելով անցեալ շաբաթ օրը արեւելեան կառաւ խուճով Վիեննա մեկներ է:

—Յէրիգիւլի եկեղեցիին նորոգութեանը առթիւ պէտք եղած բոլոր ապակիի շրջանակները և դուռները իր արհեստակիցներուն մասնակցութեամբը շինել և եկեղեցւոյ նուիրել խոստացեր է Բերայի ատուլճագործներու ֆեօշէ ուսսաի Մանուկեան Մագոստ անուն աղագայինը:

—Որբանոց-արհեստանոցներ պիտի հիմնուին Մուշի, Վանի, Սխի և Այնթապի մէջ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴ

Թաղական խորհուրդս ներկայիս կը յայտնէ Վառնայի հայ հասարակութեան թէ՛ իւր դպրոցը պահելու ինչպէս նաև Եկեղեցւոյ անմիջական պէտքերը հոգալու և վարժարանին և Եկեղեցւոյ հին պարտքերն չ'կրկնապատկելու համար պարտաւորեցու Ազգ. կառավար տուրքի

սովորութեան հետեւիլ ըստ Ազգ. Սահմանադրութեան գծած օրէնքին. հետեւաբար իւր սոյն որոշումը ի կիրարկանելու համար խորհուրդս իւր վերջին նիստին մէջ նշկատողութեան առնելով նախապէս առ այս տեղւոյս հայ դպրութիւն վիճակագիրը, խղճմտաբար ամէն աղագային անհատի վրայ Ազգ. տուրք մը վճռած է որուն հաւաքումը Թաղական խորհուրդս անձամբ պիտի կատարէ յառաջիկայ երկուշաբթի օրու ընէ սկսեալ, վստահ Վառնայաբնակ աղագայինոց այն աղնիւ զգացումներուն որք անշուշտ ունին դէպի իրենց Ազգ. վարժարանն և սիրելի Եկեղեցւոյն, որոյ պահպանութիւնը ամէն հայու պարտականութիւնը կը կապմէ:

Ի քիմաց Թաղ. խորհուրդոյ

Ատենագիր

Ատենագիր

Ս. Գաբրիէլեան

Յ. Մ. Խոյվասեան

5 Հոկտ. 1901.

Հայեղի. —Արժան կը համարինք Աղագային Տուրքի մասին Սահմանադրութեան մէկ քանի յօդուածները արտատպել:

Յօդ. 53. Ամեն թաղ մէկ մէկ անտուկ պիտի ունենայ թաղ. խորհուրդին տնօրէնութեանը տակ:

Այս սնտուկին մուտքն են՝ թաղին ժողովրդեան կողմէ տրուած թաղական տուրքի, Եկեղեցւոյ և դպրատան կալուածոց եկամուտները, կապալա կամ ուրիշ կերպով եղած նուէրները ևն. Ելքն են՝ թաղին Եկեղեցւոյն և դպրատանց ծախքն ու աղքատաց տրուելիք օշնութիւնները:

Թաղականութիւն

Հէր ճէօմաթըն քէնտի քիլիսէ ճէմիյէթի-նին թահթը նէղարէթիստէ պուլունմագ իւզըէ պիրսանտըղը օլուպ, պու սանտըղըն իյրատը՝ ճէօմաթմա իթա օլունան իանէի մախուսէ, վէ քիլիսէ վէ մէթթէպ ագարաթընըն վարիտաթը, վէ քիլիսէնին հասըլաթը, վէ վասիյէթ թարիգի իլէ վէ եախստ սաիր վէճէլէ վագը օլան աթիյէ վէ սաիրէտէն, վէ մէսարիթի մէղքիւր քիլիսէ վէ մէթթէպլէրին մասարիթիլէ ֆուգարայա իթա օլունաճագ իանէ ագճէսինտէն իպարէթտիր:

ԱԶԴԱՅԻՆ ՏՈՒՐԳ

Յօդ. 90. —Ամեն աղագային անհատ որ չափահաս է և վատակ ու շահու տէր, պարտական է տուրքով մասնակից ըլլալ աղագային ծախուց:

Յոյն տուրքը տարեկան է, և բաշխման հիմը կը բռնուի իւրաքանչիւր անհատի կարողութիւնը:

Յօդ. 91. —Աղագային տուրքը երկու տեսակ է, մէկը ընդհանուր, որ ընդհանուր ծախուց

յատկացեալ է և կը հաւաքուի Պատրիարքարանի կողմէ ազգային կեդրոնական սնտուկին համար, իսկ միւսը մասնաւոր՝ որ յւրաքանչիւր թաղի մասնաւոր ծախուց յատկացեալ է, և կը հաւաքուի թաղական խորհրդոց կողմէն, թաղական սնտուկներուն համար:

Թարգմանութիւն

Հատուր պիւլիւղէ վասըլ օլուպ, քեար ու քիսպ ոահիպի պուլունան քեաֆֆէի էֆրատը միլլէթ՝ մէսարիֆի միլլիյէ թէսվիյէսինտէ մըւշարէ-քէթէ մէճպուր տըր: Պու իանէ՝ սէնէվի իթա օլունուպ, էմրի թէվլիինէ գուտրէթը զաթիյէ էսաս թութուլուր:

Իանէի միլլիյէ իքի նէվ տիր: Նէվի էվլէլ իանէի ումումիյէ տիր քի, մէսարիֆը ումումիյէ միւնհասըր օլարաֆ՝ միլլէթ սանտուլը իչիւն Բաթրիդիւանէ մարիֆէթիյէ թահսիլ օլունուր: Նէվի սանի՝ իանէի մախուսէս տիր քի, պիր ճէօ մաթըն մէսարիֆի մախուսէսինէ միւնհասըր օլարաֆ՝ քիլիսէ ճէօմաթը սանտուլը իչիւն քիլիսէ մէճլիսլէրի մարիֆէթիյէ ախպ օլունուր:

ՉԻՆԱՑԻՆԵՐՈՒ ԴԺՈՒՔԸ



Չինական դէպքերը այժմեութիւն կուտան Անգլիոյ «Արքայական Ասիական ընկերութեան» խնամոց տակ հըրատարակուած Չինական թանկագին յիշատակարանի մը, որ մեր թուականին իբր ծ: գարուն մէջ գրուած է: Այս գիրքը մասնաւորապէս կ'ամբողջացնէ կոմփիլէիօսի վարդապետութեան մէկ կէտը, զոր Չինացի նշանաւոր փիլիսոփան մութ թողած էր: Այսինքն թէ ինչ պիտի ըլլայ մեղաւորի մը հոգին, անոր մեռնելէն ետքը:

Չինացիներու կարծիքով երբ իրենցմէ մէկուն հոգին մարմինէն անջատուի, սատանաները կ'առնեն այդ հոգին և գահաւորակի մը վրայ դնելով, ամենայն տրագու-թեամբ Դժոխք կը տանին, որուն սեմին վրայ ճակատա-գրի աստուածը կընդունի զիրենք: Չինական դժոխքը բազմաթիւ մասերու բաժնուած է. Իւրաքանչիւր բաժնի գըլուխը կը գտնուի գատաւոր նախագահ մը, շրջապատուած բազմաթիւ աթոռակիցներէ, փոփանցողներէ և ամեն աստիճանի գատաւորներէ. Իւրաքանչիւր բաժնի մէջ գատ զատ ոճիւններու գատիւր կը տեսնուին. օրինակի համար մարգարայութիւն, գողութիւն, հայհուլութիւն ևն: Պատիժները կը տարբերին մէկ բաժնէն միւսը և կը բազկանան ցաւագին և յաւիտենական տառապանքներէ: Ա-

մենէն ծանր պատիժ կ'որոշուի մէջ կը գտնուին ստախօսները, զորս սատանաներէն մէկը հոգինին հանելու աստիճան կը ծեծէ, ճշմարտութեան փառքին համար. Խիստ յոգնեցուցիչ պարագաներ ալ կան, որոնք կը շուարեցնեն գատաւարները. Այս պարագային գատաւորք նորէն երկիրը կը զրկեն այն հոգին, և ճակատագրի աստուածը մասնաւոր շնորհքով մը բարիք զործելու զանազան առիթներ կուտայ անոր. Եթէ նոյն հոգին այդ շնորհներէն չօգտուի, տձեւ կամ հիւանդոտ մարմնի մը մէջ պիտի անցնէ իր ամբողջ մարդկային գոյութիւնը: Այսպէս այն ամէն Չինաստանցիները որոնք անբուժելի կեանք մը կը բաշքշեն, կենթադրուի թէ այս կերպով անցեալ գոյութեան մը մէջ իրենց գործած աններելի մեղքն է որ կը քաւեն: Եթէ կին մը օրինակելի ընթացք մը ունենայ երկրի վրայ, մարդու կերպարանքով նորէն աշխարհ պիտի գայ, որ աստիճանի բարձրացում կը նշանակէ: Չինացի փիլիսոփաներու կարծիքով աւարիկութիւնը արական սեռէ է, իսկ սովորը իգական:

Սակայն ասիկա Չինացի փիլիսոփաներուն մասնաւոր կարծիքն է: Անոնք անսխալ չեն, ոչ ալ իրենց շինած աստուածները: Վերոյիշեալ գրքին մէջ գատական սխալի մը պատմութիւնը կըլլայ, որ ժամանակաւ սոսկալի քայլափոխութիւն մը յառաջ բերել է չինական դժոխքին մէջ: Առաքինի անձ մը որ արգար և պատուաւոր կեանք մը անցուցած էր, սարսափելի տանջանքներու կենթարկուի սատանայի մը մէկ սխալին հետեւանքով: Դժոխքի գատաւորները որպէս զի ազատ մնան ու և է պատասխանատուութենէ, գաւաթ մը «մոռացման թէյ» կը խմեն իրենց վճիռին սպասող հոգին: Այս հրաշագործ ըմպելիքը կատարելապէս կը կորսնցնէ մարդու յիշողութիւնը. «Մոռացման թէյ»ին հաւատքը շատ տարածուած է երկնային կայսրութեան մէջ: Չինացիները կ'ամբաստանեն անգլ. միսիօնարները թէ՛ գաւաթ են ատոր գաղտնիքը, և խմցնել կուտան այն Չինացիներուն զորս իրենց կրօնքին դարձնել կուզեն. Վերոյիշեալ գրքին թարգմանիչը կըսէ թէ՛ երբեք չէ կրցած գաւաթ մը թէյ խմցնել քրիստոնէութիւնը չընդունած Չինացիի մը:

Նոր հրատարակութիւն

Յ. Կ. ՊՈՆՃՈՒԳԵԱՆ

Պատկերազարդ նոր Ընթերցարան
Ա. տարի. Բ. տպագրութիւն, բարեփոխուած
Գին 70 սանդիմ. Դիմել Մ. Գալբազեանի
Վառնա

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Գուրբը թույլունենում մեջ. — Թույլունենում
օրինակի առնենք:

Պ. Միլ-էնտվարց, Ֆրանսայի գիտութեանց Ակադեմիի անդամն ու Միլզէօնի տնօրէնը մէկ քանի թույլուններու պատմութիւնը կրնէ, զոր շահեկան կը համարինք ներկայացնել մեր ընթերցողներուն:

Մտածել ինքն իրեն համար, իր բարիքին և իր անձնական շահուն համար, այս ա՛յն իմացականութիւնն է արդէն, որ մարդոց ստուար մեծամասնութեան ըմբռնումն ու գործը եղած է դժբաղդաբար: Բայց մտածել ուրիշներու բարիքին համար, դու թէ և արդարատա՛նք ունենալ իր նմաններուն հանդէպ, բացառիկ առաքինութիւն մըն է, զոր ամենէն դեպքերէն և ամենէն մարդավայելը նկատելով չպիտի ուղէինք անշուշտ բնազդական կարծուած անասուններուն վրայ տեսնել: Սակայն իրողութիւնները անժխտելի կերպով կը հաստատեն ատոր գոյութիւնը, նոյն իսկ անբաններուն վրայ:

Թույլուններու իմաստութիւնը՝ իրենց և իրենց ձագուկներուն նկատմամբ՝ ի յայտ կուգայ մանաւանդ բոյնի կառուցման, պատշաճեցումն, պահպանման և փոքրիկներու հանդէպ կրկնուած կրթանքներուն մէջ: Մատնանիշ կ'ըլլուն մանաւանդ տարբեր ձեղերու մէջ տեղի ունեցած որդեգրութիւններ: Կարմրական չ'ըլ, զոր օրինակ, որ կը պահէ կը պարտկէ փոքրիկ կտաւաքաղ մը, էգ պապկայ մը՝ որ կը դիեցնէ սարեկիկներու (սբինօզ) ձագեր և յետոյ չիկահաւեր:

Պ. Միլ-էնտվարցի գիտողութիւնը բացորոշապէս ցոյց կուտայ թէ՛ թույլունը իր մէջ կը կրէ յաճախ խանդաղատանքի, գութի և վշտակցութեան ամենախորին զգացում մը, զոր կարելի չէ երբէք հասարակ բնազդումի արդիւնք համարիլ: Տնկաբանական պարտէզը վանդակի մը մէջ, կըսէ, դրուած էին երկու սիրուն նանֆէնեան թիկասառներ, երկուքն ալ էգ, որոնք համեմաշխտութեամբ ու փոխադարձ սիրով կ'ապրէին միասին: Փետրուարի վերջերը, գոշազոյն կաւրգինալ մը (հիւսիսային Ամերիկայի բնիկ թույլուն) որ նոյն թույլուններին մէջ կը գտնուէր՝ այդ թըխկատարներէն մէկուն հետ կուիւր բռնուելով, փետուրներէն մեծ մասը փեթտելէն յետոյ, անոր թաթերէն մին ալ կուտոեց կտուցի զօրաւոր հարուածով մը: Խեղճ թույլունը չէր կրնար թառին վրայ կենալ, գետնաքարէ կերթար մեծ դժուարութեամբ, և ցուրտէն կը դողդղար փետրազուրկ մորթին տակ:

Ընկերուհին յիշաց անոր վրայ, ամեն իրիկուն վերադարձնելով իջնելով մամուռի և խոտի շիւղեր կը բերէր փափուկ անկողին մը պատրաստելու և ամաքելու համար անոր ցաւերը: յետոյ հիւանդին շատ մօտիկը նստելով ու թեւերովը ծածկելով, բոլոր գիշերը կը պահպանէր զայն, հակառակ իր այդ դիւրբին մէջ կրած ծայրահեղ անհանգստութեան: այնպէս որ շաբաթներով չի թերացաւ: երբէք գիտութեան այդ գործին մէջ: Եւ երբ հակառակ իր այդքան տաճած խնամոց իր բարեկամութեան ցաւերուն չ'ըմբռնուով մեռաւ վերջապէս, այն ատեն տխրութիւնը պատեց զինքը: դադրեցաւ ուտել խմել, և ժամանակ մը վանդակին մէկ անկիւնը անշարժ մնալէ յետոյ, ինքն ալ մեռաւ իր կարգին:

Բնազդ է այս, կը հարցնէ Միլ-էնտվարց: Եւ իրօք զարմանալի չէ՞ք գտնել:

Ի՞նչ կը խորհիք մանաւանդ, սիրելի ընթերցող անոնց որդեգրութեան մասին: Քանի՞ առաքինի անձեր ունեցանք մեր մէջ գոնէ ու մեր որբերը որդեգրելու վսեմ գործին համար: Թողուցինք օտարներուն՝ սարեկիկներուն պէս՝ որ անոնք խնամեն ու մերինները մենէ օտարացնեն: Ո՛ւր մնաց մեր իմացականութիւնն ու իմաստութիւնը և մանաւանդ ո՛ւր մեր առաքինութիւնը: Աստուած ողորմի:

Վիէնա

Կ. Տ.

ԲԱՌԵՐՈՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Ամուսնութիւն. — Տարօրինակ բաղմապատկութիւն մը, այսինքն $2 \times 1 = 2$ երկու անգամ մէկ մէկ:

Կեղծաւոր. — Աղաւնիի փետուրով ագռաւ մը:

Շողոքորդութիւն. — Պարզամիտներուն թըմրադեղը:

Միսիոնար. — Բրիտոսի աղքատ առաքելոց գերերշանիկ փոխանորդը:

Կլերական. — Հոգիներու լուացարար, որուն բարոյական զգեստները շուրի և սապոնի երեւ չեն տեսներ շատ անգամ:

Ամուրի. — Ներգործական բայ մը, որուն սեռի խնդիրը տէր բայի փոխուած է:

Կոյս. — Նոյն ընդ վերնոյն, բայց բայը՝ կըրաւորականի և սեռ խնդիրը տէր բայի փոխուած:

Լիշթամոլ. — Աստուած ձանձրացնող աներես մուրացկանը:

Բծիչկ. — Կեանքին հնակարիւտը:

Դարման. — Կեանքին կարկտանը :

Գերեզմանատուն. — Մահուան սպանդանոց :

Որորան. — Դադալի գրացին :

Ոսկի. — Ամենակարող Աստուծոյ բազմակարող փոխանորդը աշխարհի մէջ :

Կնիկ. — Էրիկ մարդու անհատասար կէսը :
Լ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ՊՈԼՍՈՅ ՓՈՔՐԱՊԱՏԻԻ ՄԻԻՍԻՆՆԵՐԸ

Պոլսոյ մէջ կան կարգ մը օգաթուոյց, օգաթնակ ու օգասաւառն երիտասարդներ, որ շաբաթուան վեց օրը իւրօր ֆէսով, թիպացու օձիքով, կարկտած կոշիկներով ու անգաւազան կը պտտին, բայց երբ եօթներորդ օրը գայ, երբ քաղաղները կիրակին կ'աւետեն, ճիշդ այն ատեն այդ երիտասարդները կը փոխուին, կ'այլակերպին, կ'այլափոխին փետակործան գրութեամբ :

..

Գլխարկը դէպ ի մէկ կողմ ծռած է քիչ մը, Քրիզէ մազերը գլխարկէն դուրս կը պոսթկան. Նոփ նոր զգեստ մը գեւ ճիւղան վրան, պոնտուռին երկու փէշերը՝ առագաստաներու պէս օգով կուռին, 30 զրուշնոց փոզկապ մը՝ վրան երկու զրուշնոց ասեղով մը. մատուռները Պօնթարչէի մատնին երով լեցուած, այնչափ որ չլինար մը կանուռները շարժել. ոսկեկտթ գաւազան մը օդին մէջ կը ճաճէ. լուսթրին պօթեր, ֆիլ տէգօսէ գուլպայ՝ պոնտուռին ձախ գրպանէն մեծ տաք թաշկինակ մը կ'ընդնշմարուի, (ո՞վ գիտէ ուրկէ ձեռք անցուցած), ծնօտը՝ բէրտաճ թրաշ, պեխերը՝ երկու թեւերին բացած դէպ ի երկինք կը նային բան մը հայցելու պէս, ուսերը վերամբարձ, զիւլանալը սիկարէթ մը բերանը, գօլալը բալձրաբերձ օձիք մը՝ որ մինչև քիթը կելլէ, ծաղիկ մը պոթոնիէն, մէկ թեւը բաց գոյն բարտուի մը, ցուցամատն ու բթամատը բաճկոնակին գրպանիկին մէջ. ոսկեգոյն (բայց ոչ ոսկի) ժամացոյց մը, որուն չղթայէն կը կախուի... սիրտ մը... մետաղէ.

Եւ այսպէս լուտրէ, կանթէ, պօթէ ու բարֆիւմէ, չի քալեր այլ կը թռչի, կը թռչտի աֆիզթէ քալուածքով մը, կնոջական ծեքծեքումներով և մենաշնորհուած տանտինըմանով մը.

մինչ վրայէն անուշ բուրումներ քիթդ... կը դինովցնեն :

Կատարեալ ծանծաղամտի մը շարժուձեւերով ֆրանսահայերէն կը բարբառի. շատ բառերուն հայերէնը չի գիտեր... ա՛հ, բան... բան, ինչպէ՞ս կըսեն :

— Թիէն, պօնտուռ, մօնչէն, ի՞նչպէս էք :

Բերայի բոլոր օրիորդները կը ճանչնայ, անունին, մականունին բերնուց գիտէ, անոնց հետ պզտիկ անցեալ մըն ալ ունեցած է, ժամանակ մը անոնց հետ թուռ ըրած է :

Հայերէն թերթ չի կարդար, բայց ֆրանսերէն թերթ մը անպատճառ կերեայ մէկ գըրպանէն :

Ոչ մէկ սուարէէն պակաս է, և այնպէս կերեակայէ թէ Բերայի բոլոր աղջիկները իրեն ալը կը քաշեն կօր :

Պարահանդէսներու հաւատարիմ հետևորդն է, միշտ թեւ տամտ մը ունի, մինչև առտու ոսկի մը կամ երկու ոսկի կը խարճէ :

Կարգելու աղջկան տէր մայրեր իրենց մէջ կը փափան :

— Արդեօք որուն զաւակն է :

Հայրը՝ սպաճի Գրաբոս աղան է, իսկ ինքը՝ չուկայի մէջ մանիֆաթուրայի վաճառական Կուռնելիոս էֆին քով ամբուլայէ. շաբաթականը 30 զրուշ է : Գերագոյն իտէալն է չօրպաճիին փեսան ըլլալ :

Անունը, Միւսիւ ժագ. Եթէ Յակոբ ըսես, կը նեղանայ ու ամիս մը քեզի հետ չի խօսիր :

Եթէ մէկ քանիկիններու և օրիորդներու մէջ գտնուի, կամացուկ մը բանդալոնը վեր կ'առնէ՝ նոր կօշիկները և Միրէն գնուած սև գուլպաները ցուցադրելու համար :

Կիրակի օրերը՝ շաբաթուան միւս վեց օրերուն մէջ ճանչցած մարդիկը չի ճանչնար :

Մինչև հոս գրութեան թիւն մասին խօսեցայ, իսկ ներսերեւոյթը...

Գանկը՝ թափուր, միտքը՝ Օ, լըշուլիւն՝ Ջ. սիրտը՝ այն ուրտերէն զոր ամեն առտու ճիւղերձիները կը ծախեն, գրպանը՝ լեցուն պարապութեամբ :

Եթէ կուզէք տեսնել Փոքրապատիւ Միւսիւի կատարեւագործեալ մէկ տիպարը, դիմեցէք Բերա, ուր կը վխտան անոնք :

Օր մըն ալ սակայն կիմանաս թէ նշանուած է ան 300 ոսկի դրամօժիտ ունեցող աղջկան մը և... փեսայ պիտի երթայ (ինչ որ կը նշանակէ թէ հազըր պիտի ուտէ և հազըր պիտի խմէ) :

Ո՛հ, ո՞վ գարք, ո՞վ բարք :

Կ. Պոլիս.

Սեպ. 29

Ե. Թ.

ՏԵՂԵՂԻ

Աժանս Բոժոժիկ եւ Հնկ.

Անդեն

«Անդենի Դերասանական» առաջնակարգ խումբը, որուն նմանը չի կայ այսօր երկրի վրայ, վերջնապէս կազմուեցաւ հետեւեալներով.

Պարոնայք Էքշեան, Մաղաքեան, Ագամեան, Փասուլեան, Սիւսի, Գ. Ռշտունի, Դրեանց, Նալեան, Պասման, Ունճեան, Փափազեան, Լճեցի, Աճէմեան, որդի Պէնլեան, Կիւրեղեան, Օրիորդք Հերանոյշ, Մարի Նուարդ և Փասուլեան:

Ա. Ներկայացում ուղղուած է՝

Միլտոնի «Դրախտ կորուսեալ»

Կամ «Դժոխք և Արքայութիւն»

Թատերախաղ անթիւ տեսարաններով
ի նպաստ

Տակաւին քրկրի վրայ դեգերող հայ դերասանաց խեղճուկրակ վիճակի բարւոքման:

Առաջին կատակերգակ Գ. Ռշտունի պիտի երգէ իր հեղինակած «Ծածկեալ աղքատներ»ը, որ հայ դերասանաց, խմբագրաց, գրագիտաց և վարժապետաց ասդենական կեանքը կը պատկերացնէ.

Կանոնաւոր երաժշտաց խումբ մը՝ առաջնորդութեամբ Տ. Չուհանեանի միջնարարներուն օգնութիւն հատընտիր կտորներ պիտի նուագէ:

Առաջնակարգ տպագրիչ Ճ. Արամեան խոստացած է պէտք եղած ազգարարութիւնները ու տոմսերը ճիշդաբար տպագրելու:

Հռչակաւոր հրապարակագիր Օգսէն Խօճասարեան ալ իր նորագիր թերթին երեք սիւնակները յատկացուցած է թատերական քրոնիկին, փոխարէն ընդունելով ազգային տեսակէն առաջնակարգ տոմսակ մը:

1870ին Արեւելեան և Կէտիք բաշայի թատրոններուն դռնապան շիշման Բիւզանդ աղան որ 16 տարիներէ ի վեր քաւարանին մէկ անկիւնը կը ճգնէր, նորէն իր պաշտօնին գլուխն անցաւ, կարգ մը ազգային հանգիստականներուն մուտքը . . . չարգիւելու համար:

Նոյն, կէս գիշեր

Դերասանական խումբը միաձայնութեամբ որոշեց Անդէն հրաւիրել Պ. Սերովբէ Պէնլեանը, Մնակեանը և յուշարար Տ. Գալէմեանը, մասնակցելու համար տարեգլխուն տրուելիք ազգա-

յին նոր թատերախաղին՝ զոր այս միջոցիս գլուխ գլխի տուած կը պատրաստեն Պէշիկթաշլեան, Դուրեան, Հէքիմեան և Պարոնեան՝ քաւարանին վերնասրահը հաւաքուած:

Վառնա

Յուշարարապետ Տ. Տ. Գալէմեան պատրաստականութիւն կը յայտնէ Անդէն երթալու, պայմանաւ որ շէնքով շնորհքով կանխավճար մը ըլլայ իրեն:

Քամչաթքա

Առնեմ-Չտամեան կուսակցութեան Տէօֆիլնքիսները ժողովակ մը կազմելով որոշեցին տէնօռի ենթարկել այն ընկերները որոնք լքելով զիրենք այսօր միութենական եղած են:

Նոյն

Մէկ քանի վարժարաններու մանկապարտէզի սրահները աշակերտաց շատութենէն պղտիկ գալուն պատճառաւ որոշուեցաւ պատերուն վրայ ընկերներ շինել տալ, ուր նորեկ պղտիկները պիտի շարուին . . . իյիւնն քօրքօզալի պէս:

Ուլիցա Թուռա

«Յիսուն երկուքնոց այրի մը 30-նոց երիտասարդի մը հետ ամուսնանալու համար սակարկութեան մտաւ: Առաւ-փախաւ ճօրճի որ խափուի պաշտօնը ունի, հարսնցուն ունեցած օժիտին հետեւալ ցուցակը պաշտօնապէս յանձնեց երիտասարդին:

1 մատնի, 1 օղ, 1 արծաթ պիլէղիկ, 1 խաբլամա սաթ, 3 ֆիսթան, 1 բէնպէ քիւրք, 1 իրէքլի շէմշիյէ, 1 դարեօլա, 3 թէնճիրէ, 1 բէշքօ տէօքմէ, 4 խաբախլը սահան, 1 սաճ մանկալ, 3 սաճ ալաղի՝ մէկուն օտքը կոտրած, 2 մաշա, 1 էլբաղէ՝ Սթանպօլ իշի, 1 խոտէ սէտիր ու 3 բարձ պատմա մախաթով:

Փեսացուն ունեցած գոյքերուն ցանկն ալ հետեւան է.

Հագած խաթ մը լաթը,

Ամառուան խսիր շաբաւ մը,

Չմեռուան բէօստէքի խալբախ մը:

ՏԵՂԵՂ

Հետեւալ գրքերը կը ծախուին Ա. Չարպահանէլեան գրատունը.

Քերական դաղիքէն	50 ս.
Քերական ընթ. պոնտացի Բ.	1 30
Փոքրիկ ընթերցարան	70
Դամեխիաղարդ տիկին	2 50
Աշիան տերեւեր	1 50

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (33)

ՌԷՆԷ ՏՐԻՆ ՍԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԺԱՐԻՍ-ՄԱՐԺԱՐԻՍ)



Այսպէս կրցաւ իմանալ երկու անմեղներուն դատարարութիւնը՝ Վճռուած օրն իսկ, եւ ուրախութիւնը չափ ու սահման չունեցաւ. բայց իր պատուիրակներէն անոնք որ կը հսկէին տիկին լիուի վրայ, իմացուցած ըլլալով իրեն՝ անոր տեսակցութիւնը Բերքինսի հետ, անմիջապէս հասկցաւ մարտահրաշխան Նպատակը. եւ անմիջապէս կրկին ծրարիւր մը պատրաստեց՝ արգիլելու համար զայն որ չազատէ Սօլ-Պրոտէն եւ միանգամայն սուղի նստեցունէ անսր միջամտութիւնը:

Այս արգիւններուն առաջինը ձեռք բերելու համար, առեւտրային տուաւ Վարդը, որուն բացատրութիւնները կրնային իր մանկամարդ տիրուհին աղատել կատարանէն, յետոյ յարձակում մը պատրաստեց Բերքինսի երկկայմին դէմ:

Կանխաւ ապահով էր որ ծովահենները եւանդեամբ պիտի կատարէին այս արշաւանքը, որ ոչ միայն պատուական գործողութիւն մըն էր, այլ և անոնց համար առիթ մը Բէյ-Հօի և անոր ընկերներուն դատարարութեան վրէժը լուծելու:

Դժոխային այս ամեն կարգադրութիւններուն մէջ Չու մէկ սխալ գործած էր. մէկ անգամ միայն թերացած էր իր սովորական խոհեմութենէն:

Առջի օրն է այն օրուան ուր հասած ենք, երբ Սօլ-Պրոտէն ու մօրն հանգիպելով Թաէնան գրաններէն, իր տետրութիւնը և միանգամայն իր տտրիփանքը մղած էին զինք ինքզինքը ճանցնելու խեղճ աղջկան՝ Վերջին անգամ մըն ալ զայն առնջելու համար:

Բայց շուտով հասկցած էր թէ իր հոտէն պիտի իյնար քանդանի բոլոր ոստիկանութիւնը, եւ իր մարդոց մէկը Սանկին զրկելէ յետոյ՝ իր հրահանգներն անոր տալու համար, փութացած էր նաւահանգիստ դիմել եւ Վում—Բօա հասնիլ:

Խեղացութեամբ վարուած էր. եւ այս բան կը յայտնէ թէ եղեռնադատ տետրին խեղճ նախագահին ինչու էր կրցած բռնել իր մարդասպանը Հօնանի արուարձանին մէջ:

Արդ՝ Էֆէնի դէմ մտադրուած յարձակման եւ

իրենց նախկին պետին կախուելուն վրայ կը խօսակցէին ծովահեններն ի Վանկ—Մու, փորթուկէզ հին քայքայուած ամրոցի մը մէջ, ուր Զուրի—Եղեգը հաստատած էր իր բանակետը:

Վում—Բի իր ընկերները կը զրգուէր անգլիացիներուն գէմ, երբ ժայռին վրայի պահակը եկաւ ծանուց թէ պետը ցամաք պիտի ելլէր:

Մուրացկաններու իշխանին պատուիրակէն իմանալով, Չու խոհեմութիւն չէր համարած օր մը աւելի Վում—Բօա կենալ. փութացած էր իր մակոյկը իջնել, որ միշտ իրեն կը սպասէր գետին մէկ բազկին եզերքի բարձր խոտերուն մէջ:

Շնորհիւ իր բսան թիւփարներուն եւ վար իջնող մակնթացութեան, հինգ ժամուան մէջ անցած էր տասնըութը մղոնները որ կը բաժնէին զինք իր վայրենի ու անթափանցելի որջէն:

—Բարի լուրեր, ըսաւ իր մարդոցը, յանկարծ անոնց մէջտեղը երեւնալով:

Զուրի—Եղեգին անգամները ամենքն ալ ոտքն ելած էին պետը տեսնելով:

—Այո, բարի լուրեր, կրկնեց: Այս վայրկենիս իսկ անգլիացիները կը մեղցունեն մեր տասն եղբայրները, բայց պիտի կրնանք շատ շանցած վրէժին լսածե, վասն զի թերեւս լրումէն առաջ, թշնամութիւնները պիտի վերսկսին Ձին կառավարութեան և օտարականներուն միջեւ:

Բոլոր ունկնդիրները ուրախութեան աղաղակ մը արձկեցին:

—Հիմակուհիմա, շարայարեց Չու, պիտի զարնենք այս մարդերէն մէկը, սր մեր ամենէն մեծ թըշնամին է, Բերքինս նաւապետը. իր երկկայմը վաղը լէնդէնէն լանթօ պիտի իջնայ: Թող մեր մակոյկները պատրաստ ըլլան: Պիտի իմանամ նպաստաւոր վայրկեանը, և մօտ գիշերներէս մէկը ճամբայ պիտի ելլենք: Ահա ձեր մասնակցութեան համար թերհաշիւ մը:

Մահասարսուռ քրքիջով մը արտասանելով այս բաները, լէնկի սպանիչը դրամներու պարկ մը նետած էր սեղանի մը վրայ:

Յետոյ նշան ընելով Վում—Բին որ իրեն հետեւի, գուրս ելաւ թողով թշուառականները որ մէջերին բաժնեն ոսկորի մը պէս իրենց նետուած այդ շահը:

—Չի գործերը ի՞նչ վիճակի մէջ են, քաբթան, հարցուց իր հաւատարիմը, երբ հեռացան մէկէ մը չը լսուելու համար:

—Զուրի—Եղեգին գործերէն աւելի աղէկ են,

պատասխանեց Կարմիր—Մամուկը . Տասնըհինգ օրէն ,
Սոլ—Պրոտէ պիտի կախուի եւ ի—Թէ յամբ մահուան
պատիժը պիտի կրէ .

—Ուրեմն Վարդը ինծի պիտի տա՞ք .

—Խոտաացած եմ , պիտի առնես . բայց բեզի ըսի
նաե թէ կուզէի անգամ մըն ալ հետս քանդոն տանիլ
զայն :

—Ե՞րբ .

—Այն օրն ուր իր տիրուհին կախաղան ելլէ .
կուզեմ որ անիկա երկուքս ալ տեսնէ մեռնելու միջո-
ցին , որպէս զի վերջին շունչը վերջին տանջանք մը
ըլլայ .

—Լաւ , տէր իմ , պիտի սպասեմ .

—Այդ աղջիկը կը սիրե՞ս .

Վում—Բի լոռութիւն պահեց , բայց աչքերը փալ
մը արձկեցին .

—Իսկ Վարդ կը սիրէ՞ բեզի , ըսաւ Չու , թէ
հեզնոտ եւ թէ ոխալից ժպիտով մը .

—Ոչ , պատասխանեց աւագակը խուլ ձայնով . Սա-
կայն պաղատեցայ մօրս որ խնամքներով շրջապատէ դա-
նիկա եւ սիրոյս վրայ հետը թօսի .

Մարդկային դէմքով այդ հրէշին բերնին մէջ այս
բառեր հայհոյանք էին ինչպէս յիշոց մը տղու մը շուր-
թերուն վրայ .

Վում—Բի խրճիթն հասած էին . Ջուրի—Եղե-
պի նոր պետին խրճիթը աւելի հեռուն էր , լեռան
բարձունքին վրայ , անգղի բոցնի մը պէս թառած .

Յանկարծ ալլալիս զէմքով հերարձակ կին մը
ճամբան դոցեց :

—Շնորհ , Չու , շնորհ , գոչեց նախկին մոսկա-
ճառին ծունգերուն իյնալով .

Վարդն էր , գուցէ այնքան փոխուած որքան այն
աղջիկը զոր իր անխոհեմութեամբը ի կորուստ մատ-
նած էր .

—Ի՞նչ կուզես , հարցուց մարդասպանը դաժան
ձայնով .

—Մի՛ յանձներ զիս աս մարդուն , պաղատեցաւ
Վարդ . ֆուն—Սի զրկեցէք զիս նորէն . կերդնում որ
չպիտի մատնեմ ձեզի , երբէք չպիտի արտասանեմ ա-
նունիդ .

—Է՛հ , ի՞նչ հոգս է որ օր մը Լէնկի սպանիչն
ըլլալս ըսեր ես կտմ ոչ . Ես հիմա սա կուղիմ որ լռես ,
գահիճը տանջանքով բերնէդ չառնէ գաղտնիքս . Իմ
ուզածս սա է որ տիրուհիդ մեռնի , եւ անպատուելով
մեռնի !

Եւ ոտքովը բրտօրէն հրիւղով մանկամարդ աղջիկը ,

արագութեամբ վեր ելաւ ժալէն ուսկից կերեւար
անսահման հորիզոնը .

Իր ոտքին տակ ծովը կը փշրուէր Լանտրոնի ժալե-
րուն վրայ . Իր հանգէպ , դետին վերակը , Վագրի կղզին
իր կաւարները կը փառնէր ամպերուն հետ . Չախակող-
մը , Մաքսօ կը բնանար իր ամալի ծոցին խորը . աջա-
կողմը , կը թուեր իրեն լսել ուրախութեան աղաղակնե-
րն անգլիական գաղթականութեան . որ ծովահեններուն
գաղապարտութիւնը կը տօնէր .

(Շար.)

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ ֆորալար վէ Հիքսայէր . Մալիւմա-
թը ֆէննիյէ . Լուղաթը Լէթայիֆ . ֆէննի էյլէնճէլէր
վէ Բէսիմլի Պիլմէճէլէր :

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ , բէյտէրբէյ
նէշր օլունան մէղքիւր քիթապըն պիւրինճի ճիւ-
տի խիթամ պուլուպ , իտարէխանէմիլլտէ սա-
թըլմագաա տըր . Փիյ 2 ֆրանք .

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ
կը ծախուին .

Լուսինեան իշխան — Պրանսահայ Բառարան ,
գին 25 ֆր ասկեղրամ . Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք .

Թ. Գ. Հինտլեան — Տեսական եւ գործնական
Քերականութիւն Պուլկարբէրէն յեզուի 1 ֆր .

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն
Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն . 2 ասկէս ֆր .

Թապալաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ-
Բարեկենդանի անկուտիները , կատակախաղ 1
արար 50 սնդ .

Մահուակիյէթին միւքեաֆաթը , գօմէտի պիւր
բէրտէ , 50 սնդ .

Գագանճ գօճա եախօտ էնֆիյէճի , գօմէտի պիւր
բէրտէ , 50 սնդ .

Печатница „Взаимность“ — Варна .